# Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱԽԱԼՑԽԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(13 հունիսի, 2011 թ.)

«Ապաքէն դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք»:
«Արդարեւ, կենդանի Աստուծոյ տաճար էք դուք»:
**(Բ Կորնթ. Զ 16)**

Սիրելի հավատավոր ժողովուրդ,

Գոհաբանական աղոթք է Մեր հոգում առ Աստված, որ առիթը պարգեւեց Մեզ Հովվապետական այց կատարելու Վրաստանի Հայոց թեմ եւ այսօր Մեր հոգեւոր եղբոր՝ Իլիա Բ Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարքի հետ հանդիպելու ձեզ: Հավատավոր հայորդիներիդ բերել ենք հայաստանաբնակ եւ աշխարհասփյուռ ձեր եղբայրների ու քույրերի ողջույնները, սերն ու զորակցությունը, օրհնությունը հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:

Ուրախ ու քաջալեր ենք տեսնելով, որ դուք շարունակում եք դարեր ի վեր Ջավախքում ապրած ձեր հայրերի հավատավոր եւ ազգասեր ուղին՝ ձեր սրտերում անսասան պահելով հավատարմությունը մեր Սուրբ Եկեղեցուն, նախանձախնդիր լինելով ազգային մեր արժեքների հանդեպ եւ պահպանելով մեր հին ու հարուստ մշակույթը: Պատմության մեջ մեր Սուրբ Եկեղեցին խնամել ու առաջնորդել է մեր ժողովրդին ամենուր, որտեղ հայորդիք բնակություն են հաստատել: Այսօր, գոհություն Աստծո, մեր Եկեղեցին հնարավորություն ունի ազատորեն իրականացնել փրկչական իր առաքելությունն ու հոգեւոր սպասավորությունը Սամցխե-Ջավախքում, որտեղ ապրող հայ բնակչությունը մեծ կարիքն ունի հոգեւոր խնամքի, հայեցի եւ քրիստոնեական լիարժեք կրթության:

Դուք, սիրելիներ, կրողն ու ժառանգորդն եք վրացահայ համայնքի հարուստ ժառանգության, որ կերտվել ու բարձրացել է՝ հաստատված մնալով հավատքի վեմին: Վրացահայ համայնքի, Ջավախքի այս գեղաշուք երկրամասի ծոցից են ելել մեր ժողովրդի բազմաթիվ երախտավոր զավակներ՝ տաղանդաշատ գրողներ, երգահաններ, մշակութային գործիչներ, ազգային բարերարներ, հայ կյանքի վաստակյալ նվիրյալներ: Հավատքի նույն զորությունը, ազգասիրության եւ եկեղեցանվիրումի նույն ոգին, Վրաստանի եւ Հայաստանի հանդեպ նույն նախանձախնդրությունն են ձեր սրտերում, որոնցով բարիք եք ստեղծում եղբայր վրաց ժողովրդի հետ, հոգում Ջավախքի բարգավաճման եւ ձեր հոգեւոր-եկեղեցական կյանքի նորոգության համար: Բարձր պահելով աստվածաշնորհ հավատքի ջահը ձեր սրտերում, մեր հոգեւոր արժեքները պահպանելով՝ «արդարեւ, կենդանի Աստուծոյ տաճար էք դուք», ինչպես ասում է առաքյալը Աստծո պատգամներին հավատարիմ քրիստոնյաների մասին:

Սիրելի բարեպաշտ զավակներ մեր, հավատակից մեր ժողովուրդների համատեղ կյանքի վկայություններով հարուստ է Ջավախքը: Այս հրապարակում կանգնած է Թամար թագուհու արձանը, որը նույնպես հիշեցնում է մեր ժողովուրդների պատմության համատեղ էջերի մասին: Հիշեցնում է փորձություններով լեցուն ժամանակներում հայ-

վրացական համագործակցության, զինակցության և հաղթանակների մասին, երբ հայ-վրացական զորագնդերը Զաքարյան զորավարների առաջնորդությամբ պաշտպանեցին Վրաստանը և ազատագրեցին Հայաստանի ընդարձակ տարածքներ՝ հնարավորություն տալով մեր ժողովուրդներին ապրելու խաղաղ, վայելելու իրենց ստեղծած և Աստծուց օրհնված բարիքը, արգասավորելու իրենց հոգևոր, կրթա-գիտական և մշակութային կյանքը: Տերը օրհնեց հավատքով պաճարացյալ մեր ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունը, որոնք բարեբեր արգասիքներով պիտի բազմապատկվեն այսօր: Մենք հավատում ենք, որ մեր ժողովուրդների միջև եղբայրական սերն ու բարեկամությունը պիտի արգասավորվեն միասնական նոր ձեռքբերումներով, միմյանց զորակցության ու աջակցության վկայություններով:

Այսօր ձեր կյանքում տակավին գոյություն ունեն հոգսեր ու դժվարություններ, որոնք հաղթահարելու համար մեր երկրները ձեռնարկում են նաև միասնական քայլեր: Ձեզ չպիտի ընկճեն կյանքում ծառացող խոչընդոտներն ու խնդիրները, այլ արի ոգով ու առ Բարձրյալը հույսով պիտի շարունակեք ջանք ու նվիրում բերել ձեր բարի նպատակների իրագործման համար, ձեր բարօրության, ազգային և հոգևոր ձեր կյանքը զորացնելու համար: Միշտ հավատացեք, որ Աստծո կենդանարար զորությունն է առաջնորդում Նրան ապավինողներին, ինչպես դարերի փորձությունների միջով առաջնորդեց հնագույն և փոքրաթիվ մեր ժողովրդին և օրհնեց մեզ հոգևոր ու ազգային ձեռքբերումներով: Համոզված ենք, որ Վրաց Քույր Եկեղեցու և պետության սատարումով առավել կարդյունավորվի և կզարգանա Ջավախքը և հայոց ազգային-եկեղեցական կյանքը:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, ապրեք ու գործեք հավատքով, միմյանց հանդեպ, վրաց ձեր եղբայրների հանդեպ սիրով ու նախանձախնդրությամբ: Հոգացեք, որ ապրի ձեր զավակների շուրթերին ոսկեղենիկ հայոց լեզուն, մեր հայրերի աղոթքը, որ զորանա նրանց հոգում մեր նախնյաց սուրբ հավատքը, որը դարձնում է մեզ կենդանի Աստծո պաճար, Աստծո ժողովուրդ:

Վերստին գոհություն հայտնելով Տիրոջը, աղոթք ենք բարձրացնում առ Տերը Մեր սիրեցյալ եղբայր Իլիա Բ Համայն Վրաց Պատրիարքի համար, Ով Մեզ հետ միասին Իր հայրական սերն ու օրհնությունն է բաշխում Ախալցխեի հայ և վրացի հավատավոր ժողովրդին: Մեր օրհնությունն ենք բերում Ջավախքի տեղական իշխանությունների ներկայացուցիչներին, Վրաստանում պաշտոնավարող ՀՀ դեսպանին, ովքեր աջակցություն բերեցին Մեր այս ուղևորությանը:

Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում Ձեզ, սիրելի Սրբազան, ուխտյալ եկեղեցականներ, թեմական վարչության անդամներ, կրթության և մշակույթի նվիրյալներ, սիրելի բարեպաշտ ժողովուրդ Ախալցխայի և շրջակա գյուղերի՝ ձեր նախանձախնդրության ու ջանքերի, հավատավոր և եկեղեցանվեր ձեր ընթացքի համար և աղոթում ենք, որ Տերը օրհնի ձեր կյանքը, ձեր եկեղեցաշեն ու հայրենանվեր գործերը՝ հանուն ջավախահայության հոգևոր ու ազգային կյանքի պայծառության: Եվ թող Տիրոջ ամենախնամ հովանու ներքո արգասավորվի մեր եղբայր ժողովուրդների դարավոր բարեկամությունն ու համագործակցությունը:

Շնորհք, սէր և ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ ընդ ամենեսեան. Ամէն: